

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

### ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԴՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Գևորգ Մկրտչի Պետրոսյանը 07.09.2009թ. համատեղության կարգով նշանակվել է «Արփա-Սևան» ԲԲԸ տնօրենի տեղակալ հիդրոտեխնիկական կառույցների շահագործման հարցերով:

2. Տնօրենի տեղակալի իրավասություններն ու պարտականությունները սահմանվում են՝ համաձայն հիդրոհանգույցների շահագործման տիպային անձնագրերով նախատեսված պահանջների:

Բնակության վայր – քաղաք Երևան, Էրեբունի շենք 26, բնակարան 23: Թողարկողի կազմից դուրս ծավալած գործունեությունը - Վերջին 5 տարիների ընթացքում «Թունել» ՍՊԸ հիմնադիր, տնօրեն և նախագծերի ղեկավար:

3. Ընկերության կառավարման մարմինների անդամների հետ ազգակցական կապ չունի:

4. Մասնագիտությունը՝ լեռնային ինժեներ - հիդրոտեխնիկ, տեխնիկական գիտությունների թեկնածու «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ» մասնագիտության գծով:

Գ. Պետրոսյանը խարդախության համար երբևիցե չի դատապարտվել, պետական որևէ մարմնի կողմից չի գրկվել որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից: Սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործնթացի հետ չի առնչվել: Որպես «Թունել» ՍՊԸ տնօրեն և նախագծերի ղեկավար Գ. Պետրոսյանը ի պաշտոնե մասնակցում է Արփա-Սևան թունելի վնասված հատվածների վերականգնման բանվորական նախագծման և հեղինակային հսկողության իրականացմանը, իսկ քանի որ «Արփա-Սևան» ԲԲԸ մասնակցում է «Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործման և վերանորոգման աշխատանքների կատարմանը, ապա հնարավոր է շահերի բախում որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև:

5. Որևէ պայմանավորվածություն խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ համաձայն որի Գ. Պետրոսյանը նշանակվել է ընկերության կառավարման մարմնի անդամ չկա:

«Արփա-Սևան» ԲԲԸ

Տնօրեն՝

Պ. Հակոբյան

Կատարող Զ.Վարդանյան

հեռ. 26-11-90